



ՈՒՍՈՒՑՉԻ ԱՏԵՍԱՑԻԱ

2021

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

ՔՆՆԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

### *Հարգելի՛ ուսուցիչ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:  
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ  
առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք  
դրան անդրադառնալ ավելի ուշ:

***Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:***

1

Քարտեզագրման ո՞ր եղանակն է առավել նպատակահարմար ՀՀ-ում բժիշկների թվաքանակը և հիվանդանոցային մահճակալների քանակն ըստ մարզերի արտահայտելու համար.

- 1) քարտեզագրամների
- 2) քարտեզադիագրամների
- 3) իզոգծերի
- 4) որակական ֆոնի

2

Կորիոլիսի ուժը ազդում է՝

- 1) քամու արագության և ուղղության վրա
- 2) քամու ոչ արագության և ոչ էլ ուղղության վրա
- 3) միայն քամու ուղղության վրա
- 4) միայն քամու արագության վրա

3

Հյուսիսային կիսագնդի բևեռային ցերեկվա սկզբին Արեգակի ճառագայթները որտե՞ղ են ընկնում ուղիղ անկյան տակ:

- 1) Հարավային արևադարձ
- 2) Հասարակած
- 3) Հյուսիսային բևեռային շրջագիծ
- 4) Հյուսիսային արևադարձ

4

Ինչպե՞ս են Գլոբալ տեղորոշման համակարգերը (GPS) և Աշխարհագրական տեղեկատվական համակարգերը (GIS) կապված իրար հետ .

- 1) GIS -ը տվյալների բազայի վերաբերյալ ծրագրային փաթեթ է, որը տվյալներ է հավաքում GPS -ի օգնությամբ
- 2) GIS -ը թույլ է տալիս, որ GPS -ի տվյալներն օգտագործվեն տեղորոշման համար
- 3) GPS -ը տվյալներ է հավաքում GIS -ի տվյալների բազայից
- 4) GPS -ը օգնում է տվյալներ հավաքել մարդածին օբյեկտների, մինչդեռ GIS -ը՝ բնական օբյեկտների վերաբերյալ

5

Ո՞ր հողատիպն է բնորոշ տայգայի համար:

- 1) գորշ անտառային
- 2) անտառային դարչնագույն
- 3) պոդզոլային
- 4) լատերիտային

6

Թվարկված <<նարաշրջան-ժամանակաշրջան-ծալքավորություն>> եռյակներից որո՞ւ մ կա համապատասխանություն.

- 1) պրոտերոզոյան-օրդովիկ-ալպյան
- 2) կայնոզոյան-կավիճ-կալեդոնյան
- 3) մեզոզոյան-պալեոգեն-հերցինյան
- 4) պալեոզոյան-քեմբր-բայկալյան

7

Տրվածներից որի՞ տեսականին է ավելի մեծ:

- 1) քարաքոսներ
- 2) մամռակերպեր
- 3) սնկեր
- 4) պտերներ

8

Իզոբարների միջև մեծ լայնությունը ցույց է տալիս՝

- 1) ցիկլոնային քամիներ
- 2) հյուսիս-հարավ ուղղվածության քամիներ
- 3) թույլ քամիներ
- 4) ուժեղ քամիներ

9

Ջրի այն քանակը, որը մեկ օրում անցնում է գետի լայնական կտրվածքով կոչվում է.

- 1) հոսքի մոդուլ
- 2) հոսքի գործակից
- 3) գետի ծախս
- 4) հոսքի ծավալ

10

Ո՞ր օվկիանոսում է ամենափոքր միջին խորությունը:

- 1) Ատլանտյան
- 2) Հյուսիսային Սառուցյալ
- 3) Խաղաղ
- 4) Հնդկական

11

Ո՞ր մայրցամաքի էնդեմիկ է հանդիսանում <<Վելվիչիա>> բուսատեսակը:

- 1) Անտարկտիդա
- 2) Հարավային Ամերիկա
- 3) Աֆրիկա
- 4) Ավստրալիա

12

Եվրասիա մայրցամաքի արևելյան ափերին ինչպիսի՞ կլիմայի տիպ է ձևավորվում:

- 1) ցամաքային
- 2) ծովային
- 3) միջերկրածովյան
- 4) մուսսոնային

13

Պալադիումի պաշարների 90%-ը ո՞ր երկրում է գտնվում:

- 1) Հնդկաստան
- 2) Ռուսաստան
- 3) Պակիստան
- 4) Չինաստան

14

Տորդեսիլիասի պայմանագրի համաձայն ո՞ր միջօրեկանով էր աշխարհը բաժանվում Իսպանիայի ու Պորտուգալիայի միջև:

- 1) արլ. ե. 69° 38'
- 2) արլ. ե. 79° 31'
- 3) արմ. ե. 49° 32'
- 4) արմ. ե. 59° 35'

15

Թվարկված երկրներից ո՞ր երեքն են հանդիսանում ծովային նավերի խոշոր արտադրողներ.

*ա) Պանամա, բ) Ճապոնիա, գ) Ալժիր, դ) Կոնգոյի հանրապետություն, ե) Չինաստան, զ) Կորեայի հանրապետություն.*

- 1) բ, գ
- 2) ա, բ
- 3) ա, դ
- 4) գ, դ

16

Թվարկվածներից ո՞ր պետություններն են մտել ԽՍՀՄ-ի կազմի մեջ երկրորդ աշխարհամարտի տարիներին:

*ա) Ֆինլանդիա, բ) Ուկրաինա, գ) Լատվիա, դ) Մոլդովա, ե) Բելոռուս, զ) Էստոնիա, է) Լեհաստան, ը) Ռումինիա, թ) Լիտվա, ժ) Չեխոսլովակիա, ի) Թուրքմենստան,*

- 1) գ, թ, ի
- 2) թ, ժ, ա
- 3) բ, գ, դ
- 4) գ, գ, թ

17

Թվարկվածներից ո՞ր եռյակի գետերն են համարվում <<քաղաքակրթության մեծ գետեր>>:

- 1) Դանուբ, Հուանհե, Ամազոն
- 2) Պարանա, Ենիսեյ, Լենա
- 3) Հոնոսու, Վոլգա, Միսիսիպի
- 4) Եփրատ, Տիգրիս, Նեղոս

18

Թվարկվածներից ի՞նչը չի տվել մարդկությանը <<Միջին Արևելք ու Հյուսիսային Աֆրիկա>> քաղաքակրթական տարածաշրջանը:

- 1) սինուսների աղյուսակը
- 2) արհեստական ոռոգման համակարգը
- 3) վանկային գիրը
- 4) ջրամբարձ անիվը

19

Ո՞ր պետության ավագիժն է ամենաերկարը և գերազանցում 100 000 կմ –ը:

- 1) Չինաստան
- 2) Կանադա
- 3) Ռուսաստան
- 4) Ինդոնեզիա

20

Ի՞նչ է Եվրոպական Միությունը.

- 1) բոլոր եվրոպական երկրների ռազմաքաղաքական միությունը
- 2) 28 անդամ երկրների քաղաքական և տնտեսական միություն, որը խթանում է ազատ առևտուրը և համագործակցությունը
- 3) 28 անդամ երկրների քաղաքական, բայց ոչ տնտեսական միություն, որը խթանում է ազատ առևտուրը և համագործակցությունը
- 4) տնտեսական, բայց ոչ քաղաքական միություն, որը խթանում է 28 անդամ երկրների միջև ազատ առևտուրը և համագործակցությունը

21

«Լեռնաշղթա-ամենաբարձր լեռնագագաթ-բացարձակ բարձրություն» շարքերից ո՞ր տարբերակում կա *սխալ*:

- 1) Վայքի լեռնաշղթա – Գոգի – 3904 մ
- 2) Ուրծի լեռնաշղթա – Ուրծ – 2445 մ
- 3) Մոավի լեռնաշղթա – Գոմշասար – 3724 մ
- 4) Արցախի լեռնաշղթա – Մեծ Քիրս – 2724 մ

22

«Լեռնագրական միավոր – վտակ – գետ - գետային ավազան» շարքերից ո՞ր տարբերակում կա սխալ:

- 1) Բազումի լեռներ – Չորագետ – Դերեղ – Կուրի ավազան
- 2) Սյունիքի բարձրավանդակ – Որոտան – Հագարու – Արաքսի ավազան
- 3) Սևանի լեռնաշղթա – Գետիկ – Աղստև – Կուրի ավազան
- 4) Արագածի լեռնազանգված – Գեղարոտ – Հրազդան – Արաքսի ավազան

23

Հետևյալ «օգտակար հանածո-հանքավայր» շարքերից ո՞րն է ճիշտ

- |           |             |
|-----------|-------------|
| 1. կրաքար | ա. Նուռնուս |
| 2. մարմար | բ. Արարատ   |
| 3. բազալտ | գ. Լճաշեն   |
| 4. պեղիտ  | դ. Թալին    |
| 5. ագաթ   | ե. Դրմբոն   |
| 6. պղինձ  | զ. Իջևան    |

- 1) 3-գ, 1-զ, 2-ե, 6-ա
- 2) 4-ա, 1-բ, 3-դ, 6-ե
- 3) 1-բ, 2-ա, 4-դ, 6-ե
- 4) 2-դ, 3-ե, 5-ա, 6-զ

24

«Լիճ-ծագում-բարձրությունը ծովի մակարդակից-տեղադիրք» համապատասխան շարքերից ո՞ր տարբերակում կա սխալ:

- 1) Փարվանա-հրաբխային-2074 մ-Ախալքալաքի սարավանդ
- 2) Ալ լճեր-հրաբխային-2974մ-Վարդենիսի լեռնաշղթա
- 3) Ուրմիա-տեկտոնական-1275 մ-Հայկական լեռնաշխարհի հարավ-արևելք
- 4) Վանա-տեկտոնահրաբխային-1720մ-Հայկական լեռնաշխարհի հարավ

25

Կլիմայի գլոբալ տաքացման հետևանքներից չէ՝

- 1) փոթորիկների հաճախականության ավելացումը
- 2) սելավային երևույթների հաճախականության ավելացումը
- 3) ցունամիի առաջացումը
- 4) ծովի մակարդակի բարձրացումը

26

Ցամաքային կենսազանգվածի ո՞ր մասն են կազմում բույսերը:

- 1) 75%-ը
- 2) 99%-ը
- 3) 81%-ը
- 4) 51%-ը

27

**Կենսաբազմազանության ամենամեծ կորստի պատճառ է հանդիսանում՝**

- 1) կենսավայրերի փոփոխությունները
- 2) մրցակցությունը ներմուծված տեսակների հետ
- 3) որսը
- 4) շրջակա միջավայրի աղտոտումը

28

**Թվարկված աղտոտիչների շարքերից ո՞րն է արտահայտում շրջակա միջավայրի ֆիզիկական աղտոտումը:**

- 1) օդակախույթներ, փոշի, վիբրացիա, ինֆրաձայն
- 2) հեղուկ ածխաջրեր, սինթետիկ լվացամիջոցներ
- 3) սնկեր, բակտերիաներ, կապտականաչ ջրիմուռներ
- 4) պլաստմասսա, հիմքեր, ծանր մետաղներ, էմուլսիա

29

**Անտառապատ տարածքների մեծությամբ ո՞ր պետությունն է առաջին տեղում աշխարհում:**

- 1) Ռուսաստան
- 2) Բրազիլիա
- 3) Չինաստան
- 4) Կանադա

30

**Համացանցի միջոցով կատարվող առևտրի, բանկային գործարքների, մատուցվող զբոսաշրջային ծառայությունների բնագավառում ո՞ր պետությունն է առաջատարն աշխարհում:**

- 1) ԱՄԷ
- 2) Հնդկաստան
- 3) ԱՄՆ
- 4) Չինաստան

31

**Նշվածներից ո՞րն է ֆինանսական չորրորդ տարածաշրջանը:**

- 1) Չինաստանը
- 2) Արևմտյան Եվրոպան
- 3) ԱՄՆ
- 4) Ճապոնիան

**Աշխարհագրական թաղանթին վերաբերող հետևյալ 9 պնդումներից ո՞ր 3-ն են ճիշտ.**

- 1) Ջրի մեծ ու փոքր շրջապտույտները հանդիսանում են աշխարհագրական թաղանթի դինամիկայի կարևոր օղակ:
- 2) Մայրցամաքային և լեռնային սառցադաշտերը չեն հանդիսանում աշխարհագրական թաղանթի մաս:
- 3) Մինչ Երկրի վրա կյանքի առաջացումը՝ աշխարհագրական թաղանթը կազմված էր չորս ոլորտներից:
- 4) Աշխարհագրական թաղանթում ընթացող բոլոր պրոցեսների էներգետիկ աղբյուրներից են Արեգակը, երկրագնդի ներքին ջերմությունը և գրավիտացիան:
- 5) Երկրակեղևում նյութերի շրջապտույտը տեղի է ունենում միջուկային ռեակցիաների ժամանակ անջատված էներգիայի հաշվին:
- 6) Մթնոլորտային ճնշման բարձր և ցածր մարզերը ունեն միջօրեականի ուղղությամբ տարածում:
- 7) Վերընթաց գոտիականության գլխավոր պատճառը հասարակածից դեպի բևեռ ջերմության և խոնավության հարաբերակցության փոփոխություններն են:
- 8) Որքան փոքր են բնատարածքային համալիրներն, այնքան այնտեղ շատ են միկրոօրգանիզմները:
- 9) Երկրագնդի լանդշաֆտային թաղանթն ամբողջությամբ ձևավորվել է 20-րդ դարում:

**Մայրցամաքների և օվկիանոսների վերաբերյալ հետևյալ 9 պնդումներից ո՞ր 3-ն են ճիշտ.**

- 1) Կաղնին և հաճարենին առավել բնորոշ են լայնատերև և խառն անտառների բնական զոնաներին:
- 2) Ալպերը և Սկանդինավյան լեռներն ունեն տարբեր վերընթաց գոտիներ՝ կապված մթնոլորտային տեղումների տարբեր քանակությունների հետ:
- 3) Հյուսիսային Ամերիկայի կլիմայի ձևավորման վրա հիմնական ազդեցություն ունի Գրենլանդիայի հարևանությունը:
- 4) Հարավային Ամերիկայի սելվասներին բնորոշ է բազմաշարահարկայնությունը:
- 5) Աֆրիկայի վադիները իրենց բնությամբ առավել մոտ են Գվիանական սարահարթի գետերին:
- 6) Հյուսիսային Ավստրալիայի գետերին բնորոշ է սառցադաշտային սնումը:
- 7) Մեծ հարթավայրերում դիտվող հզոր տոռնադոների պատճառն ամռանը հարավից հյուսիս արևադարձային օդային զանգվածների տեղաշարժն է:
- 8) Եվրասիա մայրցամաքի լայնատերև անտառների բնական զոնան ամբողջությամբ հերկված է:
- 9) Արևելյան և Հարավային Ասիայում մուսսոնային կլիման ձևավորվում է օդի միայն արևմտյան ուղղությամբ տեղաշարժի հետևանքով:

**Հայաստանի վերաբերյալ հետևյալ 9 պնդումներից ո՞ր 3-ն են ճիշտ.**

- 1) ՀՀ-ն ցեմենտի արտադրությամբ առաջատարն է տարածաշրջանում:
- 2) ՀՀ-ի հիմնական բնապահպանական հիմնախնդիրները կապված են բնական պաշարների ոչ արդյունավետ օգտագործման և շրջակա միջավայրի աղտոտման հետ:
- 3) ՀՀ ռելիեֆի ձևերի առանձնացման մեջ, ծագումնաբանական առումով, առաջնությունը պետք է տալ ռելիեֆի կուտակումային ձևերին:
- 4) ՀՀ -ում մակերևութային հոսքն ըստ բարձրության աճում է և՛ հրաբխային լեռնազանգվածներում, և՛ ծալքաբեկորավոր լեռներում:
- 5) ՀՀ-ում մթնոլորտային շրջանառության գործընթացները հավասարապես ինտենսիվ են ամբողջ տարվա ընթացքում:
- 6) ՀՀ-ի ջրագրական ցանցի խտությունն ըստ բարձրության նվազում է:
- 7) ՀՀ-ում հաճարենի ծառատեսակի տարածումը լեռնալանջերին կապված չէ այդ լանջերի դիրքադրությունների հետ:
- 8) ՀՀ-ի բնական պայմանները նպաստում են բազմաճյուղ գյուղատնտեսության զարգացմանը, ինչպես մարզից-մարզ, այնպես էլ՝ ըստ բարձրության:
- 9) ՀՀ-ում բնակչության տարիքային կառուցվածքում գերակշռում են ծերերը:

**Մարդ - բնություն փոխհարաբերության վերաբերյալ հետևյալ 9 պնդումներից ո՞ր 3-ն են ճիշտ.**

- 1) Բնապահպանական միջազգային առաջին ծրագրի հիմքը դրվեց 1972 թ.-ի Ստոկհոլմի հանդիպման ժամանակ:
- 2) Պարենի խնդիրը գլոբալ հիմնախնդիր չի հանդիսանում:
- 3) Էկոլոգիական բուրգի հիմքում մարդն է:
- 4) Մարդու գործունեությունը հիմնականում նպաստում է բնական տարբեր բաղադրիչների ինքնակարգավորման հատկությունների բարելավմանը:
- 5) Բնական էկոհամակարգերն ավելի կայուն են, քան արհեստական էկոհամակարգերը:
- 6) Մանդային շղթայում առաջնային արտադրողների՝ պրոդուցենտների և սպառողների գիշատիչների համեմատ, քայքայողները՝ ռեդուցենտները ունեն նվազ նշանակություն:
- 7) Թթվային անձրևները դրական են ազդում ջրային մակերևութների և հատկապես լճերի ու դրանց ձկնաշխարհի վրա:
- 8) Օզոնային շերտի ամենամեծ անցքերը դիտվում են մերձբևեռային և բևեռային շրջաններում:
- 9) Շրջակա միջավայրի որակի փոփոխություններն էական ազդեցություն չունեն մարդու կյանքի տևողության վրա:

36

**Բնակչության վերաբերյալ հետևյալ 9 պնդումներից ո՞ր 3-ն են սխալ:**

- 1) Մահացության մակարդակը կախված է ռասայական պատկանելությունից:
- 2) Բնակչության կուտակման գլխավոր արեալներից է Արևմտյան Եվրոպան:
- 3) Ներկայումս բնակեցված է հս.լ. 72° և հվ.լ. 54° զուգահեռականների միջև գտնվող բոլոր տարածքները:
- 4) Դեռևս բնակեցված չէ ցամաքի մոտ 15%-ը:
- 5) Բնակչության 70%-ն ապրում է երկրագնդի ցամաքային տարածքի ընդամենը 7%-ի վրա:
- 6) Խիստ նոսր են բնակեցված տունդրայի, տայգայի և անապատային բնական զոնաները:
- 7) Բնակչության խտությունը նվազում է ցամաքի խորքից դեպի ծովեր և օվկիանոսներ շարժվելիս:
- 8) Բոլոր էթնոսներին հատուկ հատկանիշներից են տարածքը, լեզուն և մշակույթը:
- 9) Ծնելիության մակարդակը հիմնականում պայմանավորված է աշխարհագրական դիրքով:

37

**Երկրագնդի ձևի, չափերի, ներքին կառուցվածքի վերաբերյալ հետևյալ 9 պնդումներից ո՞ր 3-ն են սխալ:**

- 1) Երկրագնդի մակերևույթի վրա դիտվում են մագնիսական անկանոնություններ:
- 2) Երկրագնդի մագնիսական դաշտը տարածվում է մինչև 30 000 կմ բարձրությունները:
- 3) Ծանրամարտիկը ծանրաձողը բարձրացնելիս բևեռում ավելի շատ ջանք կգործադրի, քան հասարակածում:
- 4) Երկրագնդի միջին տրամագիծը 12756 կմ է:
- 5) Օվկիանոսային ու մայրցամաքային երկրակեղևները տարբեր ուժերով են ազդում միջնապատյանի վրա:
- 6) Ցամաքային տիպի երկրակեղևում՝ գրանիտային և բազալտային շերտերի միջև տարածվում է Մոխոյի մակերևույթը:
- 7) Քարոլորտի վերին շերտերի խտությունը հասնում է մոտ 3 գ/սմ<sup>3</sup>-ի, որը դեպի խորքը գնալիս մեծանում է և ներքին միջուկում դառնում մոտ 4 անգամ ավելի մեծ:
- 8) Երկրագնդի մագնիսական և աշխարհագրական բևեռները համընկնում են:
- 9) Երկրագնդի պտույտի ու միջուկում նյութերի տեղաշարժերի հետևանքով առաջանում են էլեկտրամագնիսական հոսանքներ, որոնք էլ ձևավորում են մագնիսական դաշտ:

38

«Տրանսպորտային ցանցի կոնֆիգուրացիա-երկիր» համապատասխան գույգերից որո՞նք են *սխալ*:

- 1) միակենտրոն-Արգենտինա
- 2) գծային-Ֆրանսիա
- 3) գծային-Չինաստան
- 4) բազմակենտրոն-Կուբա
- 5) միակենտրոն-Հունգարիա
- 6) գծային-Նորվեգիա
- 7) բազմակենտրոն-Գերմանիա

39

Ստորև թվարկվածներից որո՞նք չեն մտնում ԳՏՀ բովանդակության արտադրության կազմի մեջ:

- 1) տնտեսության կառուցվածքի կտրուկ բարդացում
- 2) գիտության, տեխնիկայի, տեխնոլոգիայի և արտադրության զարգացման կոորդինացում
- 3) մենեջերների պատրաստում
- 4) գիտատար արտադրությունների աճ
- 5) սինթետիկ նոր նյութերի արտադրություն
- 6) գյուղատնտեսության և տրանսպորտի ինտենսիվացում
- 7) ատոմային էներգետիկայի զարգացում

40

Ստորև թվարկված ՀՏ կենտրոններից որո՞նք ունեն 10%-ից մեծ մասնաբաժին համաշխարհային ՀՆԱ-ում:

- 1) Չինաստան
- 2) Աֆրիկա
- 3) Լատինական Ամերիկա
- 4) Հյուսիսային Ամերիկա
- 5) Ավստրալիա և Օվկիանիա
- 6) Արևմտյան Եվրոպա
- 7) ԱՊՀ երկրներ

41

Ստորև թվարկվածներից որո՞նք են համարվում խոշոր տարածաշրջանային տնտեսական խմբավորում:

- 1) ՅՈՒՆԵՍԿՈ
- 2) ՆԱԵԿ
- 3) ՆԱՏՕ
- 4) ՆԱՖՏԱ
- 5) ՄԵՐԿՕՍՈՒՐ
- 6) ԱՄԵԱՆ
- 7) ՄԱԳԱՏԵ

42

Ստորև թվարկված արտադրության տեղաբաշխման գործոններից որո՞նք են նոր:

- 1) Էկոլոգիական
- 2) տարածքային համակենտրոնացման
- 3) տնտեսաաշխարհագրական դիրքի
- 4) հումքային
- 5) գիտատարության
- 6) տրանսպորտային
- 7) աշխատուժի

43

Ստորև թվարկված ռեսուրսների տեսակներից որո՞նք չեն մտնում ռեկրեացիոն ռեսուրսների տեսակների մեջ:

- 1) հողային
- 2) ճանաչողական
- 3) անսպառ
- 4) բուժիչ
- 5) կազդուրիչ
- 6) սպառվող
- 7) մարզական

44

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման վերաբերյալ ո՞ր գործոններն են ճիշտ:

- 1) արդյունաբերության բազմաճյուղայնությունը
- 2) ամբողջական արտադրական ցիկլերով աշխատող արդյունաբերական տարբեր ճյուղերի առկայությունը
- 3) բնական պայմանների ու բնական պաշարների բազմազանությունը
- 4) հարևան երկրներից ներմուծման ծավալների մեծացումը
- 5) որակյալ աշխատուժի ու համապատասխան գիտելիքների առկայությունը
- 6) հողային ընդարձակ պաշարների առկայությունը
- 7) գյուղատնտեսական մեքենաշինության առկայությունը

45

«Կրոնական տիրապետող ուղղություն-պետություն» գույգերից որո՞նք են *սխալ*:

- 1) մահայանա-Նեպալ
- 2) հինայանա-Հնդկաստան
- 3) կաթոլիկություն-Մեքսիկա
- 4) ուղղափառություն-Չիլի
- 5) բողոքականություն-Գերմանիա
- 6) շիականություն-Իրան
- 7) սունիականություն-Եմեն

46

**Համաշխարհային գյուղատնտեսության վերաբերյալ ո՞ր պնդումներն են ճիշտ:**

- 1) Եվրոպայի երկրները և ԱՄՆ-ն մսի և կաթնամթերքի ամենաշատ արտադրողներն են:
- 2) Առույգացնող մշակաբույսերը հիմնականում աճեցվում են Եվրոպայում ու Հյուսիսային Ամերիկայում:
- 3) Զարգացած երկրների գյուղատնտեսության կառուցվածքում գերակշռում է բուսաբուծությունը:
- 4) Կաուչուկատու հետալի համաշխարհային արտահանողներն են Բրազիլիան ու Կոլումբիան:
- 5) Տարեցտարի նվազում է գյուղատնտեսության մեջ զբաղվածների տեսակարար կշիռը:
- 6) Ամենամեծ թվով սովյալներ ապրում են Աֆրիկայում, Ասիայում, Լատինական Ամերիկայում:
- 7) Զարգացող երկրները հանդիսանում են գյուղատնտեսական մթերքների հիմնական արտահանողներ:

47

**Հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ:**

- 1) Չինաստանը, Ճապոնիան, Դանիան ու Հարավային Կորեան նոր արդյունաբերական երկրներ են:
- 2) Զարգացող երկրներն ինտենսիվ կերպով կապիտալ են արտահանում զարգացած երկրներ:
- 3) Համաշխարհային առևտուրը համակարգում է Առևտրի համաշխարհային կազմակերպությունը:
- 4) Ի տարբերություն ազատ տնտեսական գոտիների՝ օֆշորային գոտիներում արգելվում է արտադրական գործունեությունը:
- 5) Այս պահին աշխարհում գոյություն ունի միջազգային առևտրի երկու կենտրոն՝ Հյուսիսային Ամերիկա ու Եվրոպա:
- 6) Համաշխարհային շուկայում ապրանքների առևտուրն ավելի արագ է աճում, քան ծառայությունների առևտուրը:
- 7) Միջազգային տնտեսական կապերի հիմնական ձևերից են արտաքին առևտուրը, վարկաֆինանսական հարաբերությունները, գիտատեխնիկական համագործակցությունը, միջազգային զբոսաշրջությունը և այլն:

48

**Աշխարհագրական հետազոտության մեթոդների վերաբերյալ ո՞ր պնդումներն են սխալ:**

- 1) Տվյալների շտեմարանը ներառում է տարածական ու հատկանշային տվյալներ:
- 2) Վիճակագրական մեթոդները, կախված հետազոտության բնույթից ու նպատակից, կարող են լինել սոցիալ-տնտեսական վիճակագրական և մաթեմատիկական վիճակագրական:
- 3) Համեմատական մեթոդը կիրառվում է նաև շրջանացման մեջ:
- 4) Հենակետերը կիրառվում են մաթեմատիկական հետազոտության ժամանակ:
- 5) Առանցքային տեղամասի ընտրությունը կատարվում է նկարագրական մեթոդը կիրառելիս:
- 6) Քարտեզագրական մեթոդի կիրառմամբ Ա.Վեգեները ձևակերպեց քարոլորտի սալերի տեկտոնիկայի տեսությունը:
- 7) Օդատիեզերական մեթոդները հնարավորություն են տալիս թռչող սարքերի միջոցով մեծ հեռավորությունից դիտարկելու տարբեր աշխարհագրական օբյեկտներ:

49

**Ստորև թվարկվածներից որո՞նք համամոլորակային հիմնախնդիր չեն:**

- 1) Հանցագործությունների աճ
- 2) Տարածքային և ազգային հակամարտություններ
- 3) Էներեգիայի և հումքի
- 4) Ժողովրդագրական
- 5) Համաաշխարհային օվկիանոսի
- 6) Խաղաղության պահպանման
- 7) Բնապահպանական

50

**Որքա՞ն կլինի գետի տարեկան հոսքը մ<sup>3</sup>-ով, եթե գետի խորությունը 50 սմ է, լայնությունը՝ 6 մ, իսկ գետի հոսքի միջին արագությունը 3 մ/վ:**

51 Որքա՞ն կլինի Հայաստանի Հանրապետության մակերեսը 1: 2000 000 մասշտաբի քարտեզի վրա (սմ<sup>2</sup>-ով): ՀՀ-ի տարածքը ընդունել 30 000 կմ<sup>2</sup>:

52 Որքա՞ն է 120 տ գազին համարժեք պայմանական վառելիքի քանակը, եթե ջերմային գործակիցը 1,55 է:

53 Քանի՞ տոկոսով կավելանա երկրի բնակչության թիվը 1 տարի հետո, եթե նրա բնակչությունը 3 մլն է, 1 տարվա ընթացքում բնակչության բնական աճը 20 ‰ է, իսկ միգրացիայի ցուցանիշները հետևյալն են. արտագաղթ՝ 10 000 մարդ և ներգաղթ՝ 40 000 մարդ:

54 Քանի՞ տարի կհերիքի պետության ռեսուրսաապահովվածությունը գորշ ածխով, եթե տարեկան հանույթը կազմում է 100 մլն տ., բնակչության թիվը 42 մլն. Իսկ ռեսուրսաապահովվածությունը 50 տ/մարդ:

55

Որքա՞ն է օդի հարաբերական խոնավությունը, եթե օդի բացարձակ խոնավությունը 12 գ/մ<sup>3</sup> է, իսկ օդը հագեցնելու համար անհրաժեշտ է 60 գ ջրային գոլորշի:

56

Որքա՞ն է գետի թեքությունը, եթե նրա երկարությունը 60 կմ է, ակունքի բարձրությունը՝ 1800 մ, իսկ գետաբերանի բարձրությունը՝ 900 մ:

57

Արշավախումբը հս.լ. 86° և արլ.ե. 50° կոորդինատներ ունեցող վայրից տեղաշարժվեց արևմուտք, ձևոանն անցնելով 245 կմ ճանապարհ, այնուհետև թեքվեց հյուսիս 40 օրում անցավ 444 կմ ճանապարհ: Որոշեք արշավախմբի նպատակակետի կոորդինատները:

58

Քանի՞ աստիճան կկազմի Արեգակի ճառագայթների անկման անկյունը նոյեմբերի 1-ին Երևանում:

59

Երկրի փոխադրման միջին հեռավորությունը կազմում է 240 կմ, տարեկան փոխադրվող բեռների քանակը 4000 տ.: Որքա՞ն է կազմում բեռնաշրջանատությունը:

60

Երբ նավի վրայից ուղարկեցին ձայնային ազդանշանը դեպի օվկիանոսի հասակը, ձայնի անդրադարձը գրանցվեց 14 վայրկյան հետո: Որքա՞ն է կազմեց օվկիանոսի խորությունը այդ վայրում:

61

Ակունկագուա լեռան գագաթին մթնոլորտային ճնշումը 70 մմ է. որոշել մթնոլորտային ճնշումը Վալդես թերակղզում:

62

Բայթիկ ծովի 1 տ ջրից քանի՞ անգամ քիչ աղ կստացվի, քան Կարմիր ծովից (Բայթիկ ծովի աղիությունը ընդունել 6‰):

63

Լեռների մոտավորապես ո՞ր բարձրություններում կձևավորվի ձյան և սառցադաշտերի գոտին, եթե լեռան ստորոտին ջերմաստիճանը  $+18^{\circ}\text{C}$  է (հաշվարկը կատարել  $6^{\circ}\text{C}$ -ով):

64

Քանի՞ անգամ է «1սմ-ում 150 մ» անվանական մասշտաբը մեծ 1:150 000 թվային մասշտաբից:

65

Որոշել երկու քաղաքների միջև երկաթուղային տարեկան բեռնաշրջանառությունը, եթե դրանց միջին հեռավորությունը 1:10 000 000 մասշտաբի քարտեզի վրա 3 սմ է, իսկ օրական բեռնափոխադրումների ծավալը կազմում է ծավալը կազմում է 600 տ:

66

Հաշվել տվյալ երկրի տարեկան միգրացիայի սալդոն, եթե այնտեղ ապրում է 10 մլն. մարդ, իսկ տարվա վերջում բնակչությունը կազմել է 11,5 մլն. մարդ, բնական աճը՝ 0,5 մլն. մարդ:

67

Երկրի տարածքը 250 000 կմ<sup>2</sup> է, որի 10%-ը կազմում են ցորենի ցանքատարածությունները: Ցորենի համախառն բերքը կազմում է 1 մլն. տ: Որքա՞ն է ցորենի միջին բերքատվությունը (ց/հա):

68

Քաղաքի աշխարհագրական կոորդինատներն են արլ. ե. 68° և հս. լ. 12°: Ո՞ր ժամային գոտում է գտնվում քաղաքը: